ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2019 թվականի N 66-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանին տալ ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետ Ռուզաննա Սարգսյանին պարտավորեցնել շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն N 2-5 ձևի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի հուլիսի 23
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2019 թվականի N 67-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, հիմք ընդունելով Լաերտ Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Լաերտ Պետրոսյանին և Մարինա Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2-րդ փողոցի 5-րդ փակուղու 9-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0004-0021) 2019 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 247,86 քառակուսի մետր, նկուղը՝ 38,84 քառակուսի մետր, բաց պատշգամբը՝ 14,94 քառակուսի մետր, հարթակ աստիճանավանդակը՝ 21,8 քառակուսի մետր և պարիսպը՝ 24,2 քառակուսի մետր արտաքին մակերեսներով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ.

2) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 439 350 (չորս հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսուն) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 1
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2019 թվականի N 68-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Համայնք Գետամեջ 13-րդ փողոց այգետնակ 4 հասցեում գտնվող Յուրի Ռաֆայելի Հարությունյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /հիմք՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, տրված 2019 թվականի հուլիսի 26-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0232-0003-ից/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 13-րդ փողոց 5-րդ փակուղի N 5 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 2
գ.Գետամեջ